



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022 թվական, N 34_Լ

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ
ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ
«ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ ենթակետով ու «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. միաձուլել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետները ու վերակազմավորման եղանակով վերակազմակերպել «Ֆիզիկայի ինստիտուտ» կառուցվածքային ստորաբաժանման:

2. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին վերակազմավորման արդյունքում աշխատակիցների ծանուցման կազմակերպման գործընթացներն իրականացնել՝ ՀՀ օրենսդրության, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մարտի 1-ից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022 թ. դեկտեմբեր «28»

Երևան